

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

27.01.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Յու. Պողոսյանը, Ա. Աղազարյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Զ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Պետական վիճակագրական հաշվետվության դիմային էջի օրինակելի ձևը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2001 թվականի մայիսի 29-ի թիվ 27 որոշման 1-ին կետի ա/ ենթակետն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Լ.Պետրոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Պետական վիճակագրական հաշվետվության դիմային էջի օրինակելի ձևը» համաձայն հավելվածի և ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2001 թվականի մայիսի 29-ի «Պետական վիճակագրական փաստաթղթերի

դասակարգմանը հավանություն տալու մասին» թիվ 27 որոշման 1-ին կետի ա/ ենթակետը:

/Անհատական/

2. «Կազմակերպություններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման և էլեկտրոնային առևտրի մասին» Ձև թիվ 1-SՀS, «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման մասին» Ձև թիվ 2-SՀS վիճակագրական դիտարկման հարցաթերթերը և հարցաթերթերի լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշվեց՝

Հաստատել «Կազմակերպություններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման և էլեկտրոնային առևտրի մասին» Ձև թիվ 1-SՀS և «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման մասին» Ձև թիվ 2-SՀS հարցաթերթերը համաձայն հավելված 1-ի և 2-ի, ինչպես նաև հաստատել «Կազմակերպություններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման և էլեկտրոնային առևտրի մասին» Ձև թիվ 1-SՀS և «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման մասին» Ձև թիվ 2-SՀS հարցաթերթերի լրացման մեթոդական ցուցումները համաձայն հավելված 3-ի:

/Անհատական/

3. ««Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (ամսական) և «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև թիվ 1-SS (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու» և «ՀՀ ՎՊԽ 2010 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 34-ն և 36-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» » հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշվեց՝

Հաստատել «Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (ամսական), «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական

ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի, ինչպես նաև «Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (ամսական) և «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևերի լրացման հրահանգները՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2010 թվականի հոկտեմբերի 04-ի «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ծառայություններ (ամսական) և «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև թիվ 1-SS (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին թիվ 34-Ն և 36-Ն որոշումները:

/Անհատական/

4. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 1-SԳ (տարեկան) և Ձև 1-SԳ (եռամսյակային)) պետական վիճակագրական հաշվետվությունների և դրանց լրացման հրահանգները հաստատելու՝ ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի ««Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-SԳ (տարեկան) և (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը ու լրացման հրահանգները հաստատելու մասին թիվ 02-Ն և 04-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ.Տիրիզյան/

Որոշվեց՝

Հաստատել «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-SԳ (տարեկան) և «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-SԳ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունները ձևերը և դրանց լրացման՝ հրահանգները համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի ««Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-SԳ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 02-Ն որոշումը:

/Նորմատիվ/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

5.1. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2011թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի և ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի համատեղ աշխատանքների շրջանակներում կազմակերպված «Ազգային հաշիվների համակարգ 2008-ի ներդրում» թեմայով աշխատանքային խորհրդակցությանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Խաչատրյան/

5.2. Հաղորդում՝ Ռուսաստանի դաշնության Մոսկվա քաղաքում 2011թվականի դեկտեմբերի 14-ից 15-ը «2011թ. համար միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ոչ շուկայական ծառայությունների և բնակարանի վարձակալության համադրումների մեթոդաբանական խնդիրների վերաբերյալ ԱՊՀ տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան, Լ. Խաչատրյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

20.02.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Յու. Պողոսյանը, Ա. Աղազարյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը, ՀՀ

ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան:

Նիսպում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունները և լրացումները»:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2011 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2011 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի»:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2010 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2010 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2007-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

5. ««Ծառայությունների ծավալի մասին Ձև 1-ծառայություններ (փոքր) (եռամսյակային)», «Առևտրի շրջանառության մասին Ձև 1-առևտուր (փոքր) (եռամսյակային)», «Առևտրի շրջանառության մասին Ձև 1-առևտուր (ամսական)» պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները

հաստատելու» և «ՀՀ ՎՊԽ 2010 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 32-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հարությունյան/

Որոշվեց՝

Հաստատել ««Ծառայությունների ծավալի մասին Ձև 1-ծառայություններ (փոքր) (եռամսյակային) », «Առևտրի շրջանառության մասին Ձև 1-առևտուր (փոքր) (եռամսյակային)», «Առևտրի շրջանառության մասին Ձև 1-առևտուր (ամսական)» պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել «ՀՀ ՎՊԽ 2010 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 32-ն որոշումը»:

/Նորմատիվ/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղուման հաշվետվության մասին.

Հաղորդում՝ Իտալիայի Հռոմ քաղաքում 2012 թվականի հունվարի 16-ից 19-ը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից կազմակերպված «Պարենի և պարենային ապահովվածության մասին տեղեկատվություն. հուսալի գնահատումից մինչև արդյունավետ քաղաքականության մշակում» խորագրով միջազգային գիտաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Գևորգյան, Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղուման հաշվետվության մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

/Անհատական/